ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2014 թվականի N 49 –Ա

ԳՅՈՒՄՐԵՑԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻԿ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրեցի ըմբշամարտիկ Արթուր Գևորգի Ալեքսանյանը, մասնակցելով 2014 թվականի ապրիլի 5-ին Ֆինլանդիայում կայացած հունա-հռոմեական ըմբշամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությանը, հասավ աննախադեպ հաջողության: Առանց միավոր կորցնելու, բացարձակ առավելությամբ հաղթեց բոլոր մրցակիցներին՝ 3-րդ անգամ դառնալով Եվրոպայի չեմպիոն: Արթուր Ալեքսանյանը նախապատրաստվում է հունա-հռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով Արթուր Ալեքսանյանին դրամական օգնություն տրամադրելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ըմբշամարտիկ Արթուր Գևորգի Ալեքսանյանին տրամադրել դրամական օգնություն 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիալավյանին՝ գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Ա.Գրիգորյան _____